տաքրքրութեամբ նայում էին: Մենք, երկրի սովորութեան համեմատ, «բարի աջողումնէ ասելով անցանք: Տեսնելով, որ մենք դէպի վանքն ենք գնում, նրանցից մէկը խումբից բաժանուեցաւ, եկաւ մեզ հետ: Դա մի երիտասարդ աբեղայ էր, որ առաջարկեց առաջնորդել մեզ մինչեւ վանքը: Երբ բաւական մօտեցանք վանքին, Ասլանը հարցրեց նրանից.

— Մենք կարո՞ղ ենք գտնել Հայրիկին վանքումը:

Այդ անունով կոչում էին վանահօրը:

— Դուք չճանաչեցի՞ք նրան, — զարմանալով հարցրեց աբեղան, — Հայրիկը հէնց նա էր, որ վարում էր գութանը:

— Այդ ի՞նչ գութան էր:

— Հայրիկը նոր բերել տուեց Եւրոպայից. այսօր առաջին փորձն էին անում: Սպասում ենք ուրիշ երկրագործական անօթներ եւս շուտով ստանալ:

— Վանքը երկրագործութեա՞մբ է պարապում:

— Այո, իր կալուածները ինքն է մշակում: Բայց մենք ունենք վանքում եւ երկրագործական դպրոց:

— Երկա՞ր կը մնայ Հայրիկը այնտեղ:

— Երկար չի մնայ: Նա տեսաւ, որ դուք վանքն էք գնում, ինձ պատուիրեց, որ ձեզ տանեմ, այնտեղ հանգստացնեմ, մինչեւ իր վերադարձը:

Երբ հասանք վանքը, երբ շրջապատի գլխաւոր դռնից ներս մտանք, երբ հետզհետէ երեւան եղան այդ հինաւուրց սրբավայրի պատկառելի շինուածքները, նրանց արտաքին տեսքը միայն իմ վրայ այն տպաւորութիւնը գործեց, որ ես հակամայից սկսեցի մտածել, թէ այստեղ անպատճառ տեսնելու եմ Կտուց անապատի հակապատկերը: Եւ իրաւ, այստեղ շնչում էր մի այլ կեանք, երեւում էր մի այլ աշխարհ, այստեղի մթնոլորտը ներշնչուած չէր անապատական մշտավառ խունկի թուլացնող եւ վհատեցնող ծխով, այստեղ միացրել էին հոգեւորը եւ երկրայինը աշխարհայինի հետ:

Վանքը թէ՛ արտաքուստ եւ թէ՛ ներքուստ հովանաւորուած էր ծառերով ու պարտէզներով. վազում էին սառն, յստակ աղբիւրներ, եւ ջրերի վտակները հաւաքելով, մեծ աղմուկով դարձնում էին վանական ջրաղացի ծանր աղորիքը:

— Այդ ծառերը Հայրիկի տնկածն է, — ասաց մեր առաջնորդը, — այն ջրաղացը երկար ժամանակ խանգարած էր, չէր բանում, Հայրիկը նորոգեց: